

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

/քննության հարցեր/

Նոյեմբեր 2020

ԲԱԺԻՆ Ա.

Բազմակի ընտրության հարցեր,

Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է.

1. Ստորև նշվածներից որը չի կարող դասակարգվել որպես այլ համապարփակ ծախս «շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում» ըստ ՖՀՄՄ-ների.

- Ա) Հիմնական միջոցի վերագնահատումից արժեքի նվազումը;
- Բ) Ներդրումային գույքի վերագնահատումից արժեքի նվազումը;
- Գ) Ոչ նյութական ակտիվի վերագնահատումից արժեքի նվազումը;
- Դ) Այլ կազմակերպության բաժնային գործիքում կատարված ֆինանսական ներդրման վերաչափումից արժեքի նվազումը:

2. ՀՀՄՄ 2 Պաշարներ ստանդարտի համաձայն պաշարների հաշվառման հետևյալ կանոններից որն է սխալ.

- Ա) Պաշարների իրացման գուտ արժեքը որոշվում է միայն գործող ակտիվ շուկայի հիման վրա;
- Բ) Փոխադարձ փոխարկելի պաշարների ինքնարժեքը որոշվում է <Առաջին մուտք առաջին ելք> կամ միջին կշռված բանաձևերով;
- Գ) Պաշարների արտադրության մեջ օգտագործելու նպատակով պահվող հումքի և նյութերի շուկայական գների նվազման դեպքում դրանց ինքնարժեքը չի իջեցվում, եթե ակնկալվում է, որ պատրաստի արտադրանքը, որում դրանք ընդգրկվելու են, վաճառվելու է ինքնարժեքը գերազանցող գնով;
- Դ) Նշված բոլոր կանոններն էլ ճիշտ են:

3. Ստորև նշված պարտավորություններից որը կդասակարգվի ընթացիկ ըստ ՀՀՄՄ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտի

- Ա) Երկարաժամկետ բանկային վարկի գծով պարտավորությունը, որի մարումը սակայն ղեկավարությունը որոշել է իրականացնել վաղաժամկետ՝ հաշվետու ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում, վճարելով նաև վաղաժամկետ մարման տուգանքը;
- Բ) Երկարաժամկետ բանկային վարկի գծով պարտավորությունը, որի կովենանտը կազմակերպությունը խախտել է հաշվետու ամսաթվին հաջորդող տարվա հունվարի 31-ին՝ մինչև ֆինանսական հաշվետվության հաստատումը, որով այն դառնում է վճարման ենթակա է վեց ամսվա ընթացքում.;
- Գ) Կարճաժամկետ բանկային վարկի գծով պարտավորությունը, որն ունի 1 տարով մարումը երկարացնելու օպցիոն և ղեկավարությունը որոշել է օգտվել այդ օպցիոնից;
- Դ) Նշված բոլոր պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

4. Արտադրական կազմակերպության ստորև նշված դրամական հոսքերից որը կհամարվի որպես գործառնական հոսք ըստ ՀՀՄՍ 7 *Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն* ստանդարտի

- Ա) Հումքի ձեռքբերման նպատակով ստացված վարկի մարումը;
- Բ) Հիմնական միջոցի ձեռքբերման համար բրոկերին վճարված միջնորդավճարը;
- Գ) Հիմնական միջոցի վաճառքի համար բրոկերին վճարված միջնորդավճարը;
- Դ) Վարկի ստացման համար նոտարական ծառայության վճարը:

5. Կազմակերպությունը շուկայական արժեքով՝ 500,000 դրամ, ձեռք է բերում 3 տարի մարման ժամկետով պարտատոմս, որը ենթակա է հաշվառման ամորտիզացված արժեքով: Պարտատոմսի մարման արժեքը 600,000 դրամ է, որից 200,000 դրամը մարվում է 1-ին տարվա վերջում, իսկ մնացած 400,000 դրամը՝ 3-րդ տարվա վերջում: Ըստ ՀՀՄՍ 9 *Ֆինանսական գործիքներ* ստանդարտի տոկոսային եկամուտը ըստ տարիների կճանաչվի հետևյալ գումարներով.

- Ա) 1-ին տարի 41,296 դր., 2-րդ տարի 28,188 դր., 3-րդ տարի 30,516 դր.;
- Բ) 1-ին տարի 41,296 դր., 2-րդ տարի 29,352 դր., 3-րդ տարի 29,352 դր.;
- Գ) 1-ին տարի 38,627 դր., 2-րդ տարի 41,188 դր., 3-րդ տարի 20,185 դր.;
- Դ) 1-ին տարի 38,627 դր., 2-րդ տարի 31,164 դր., 3-րդ տարի 30,209 դր.:

6. Հիմնական միջոցի սկզբնական արժեքը արժեքը 5,000,000 դրամ է, մնացորդային արժեքը 2,000,000 դրամ և օգտակար ծառայությունը՝ 8 տարի: Այն ձեռք է բերվել և անմիջապես հանձնվել շահագործման 2019թ.-ի ապրիլի 30-ին: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: 2020թ.-ի հոկտեմբերի 1-ին դեկավարությունը որոշում է այն վաճառել: Որպես վաճառքի համար պահվող վերադասակարգման պայմանները ըստ ՀՀՄՍ 5 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն ստանդարտի բավարարվում են հոկտեմբերի 31-ին: Դեկտեմբերի 31-ին ակտիվի իրական արժեքը 4,500,000 դրամ է: Սարքավորումը փաստացի վաճառվում է 2021թ.-ի փետրվարի 10-ին 4,450,000 դրամով:

Ֆինանսական տարին ավարտվում է դեկտեմբերի 31-ին և 2020թ.-ի հաշվետվությունները վավերացվում են 2021թ.-ի մարտի 18-ին:

Ինչքան պետք է լինի ակտիվի հաշվեկշռային արժեքը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում.

- Ա) 4,375,000 դրամ;
- Բ) 4,450,000 դրամ;
- Գ) 4,500,000 դրամ;
- Դ) 4,437,500 դրամ;

7. ՀՀՄՍ 12 Շահութահարկեր ստանդարտի համաձայն ստորև նշվածներից որ իրավիճակում չի առաջանա հետաձգված հարկային ակտիվ (ենթադրվում է որ ճանաչման այլ չափանիշները բավարարված են).

- Ա) Ընթացիկ տարվա հարկային վնասը կարող է նվազեցվել հաջորդ 5 տարիների հարկվող շահույթից;
- Բ) Ընթացիկ տարում դեբիտորական պարտքն ամբողջապես նվազեցվել է հարկվող շահույթից, սակայն, քանի որ կազմակերպությունն ակնկալում է այն հավաքագրել մոտ ապագայում, դեբիտորական պարտքը հաշվապահական նպատակներով դուրս չի գրվում;
- Գ) Ընթացիկ տարում ձեռքբերված հիմնական միջոցի արժեքի 1/2-ը ճանաչվել է որպես ծախս, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով ընթացիկ տարում նվազեցվել է դրա արժեքի միայն 1/4 մասը, իսկ մնացածը ենթակա է նվազեցման հաջորդ տարիներին;
- Դ) Տարեվերջին ձևավորվել է պահուստ վաճառված ապրանքների երաշխիքային սպասարկման համար, որի գծով սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով ընթացիկ տարում նվազեցում չի կատարվում, բայց կկատարվի հետագա տարիներին, երբ իրականացվեն երաշխիքային սպասարկման աշխատանքները:

8. ՀՀՄՍ 12 Շահութահարկեր ստանդարտի համաձայն նշված կանոններից որն է սխալ.

- Ա) Հետաձգված հարկը պետք է ճանաչվի այլ համապարփակ եկամուտ կամ ծախս, եթե այն վերաբերում է այնպիսի հոդվածին, որը նույն ժամանակաշրջանում ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում;
- Բ) Հետաձգված հարկային պարտավորություն առաջանում է հարկվող ժամանակավոր տարբերություններից;
- Գ) Հետաձգված հարկային ակտիվը ներկայացվում է որպես ոչ ընթացիկ ակտիվ;
- Դ) Հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը ենթակա չեն հաշվանցման:

9. ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ ստանդարտի համաձայն հիմնական միջոցի օգտակար ծառայությունը.

- Ա) Կարող է փոխվել միայն համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության դեպքում;
- Բ) Պարտադիր վերանայվում է կապիտալ վերանորոգումն ավարտելուց հետո;
- Գ) Ենթակա է վերանայման առնվազն յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում;
- Դ) Չի կարող տարբերվել նույն դասի այլ հիմնական միջոցի միավորի համար կազմակերպության կողմից որոշված օգտակար ծառայությունից:

10. ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ ստանդարտի համաձայն նշվածներից որն է ճիշտ.

- Ա) Որակավորվող ակտիվի կառուցման կամ ձեռքբերման նպատակով միայն ուղղակի ներգրավված փոխառության ծախսումներն են ենթակա կապիտալացման;
- Բ) Փոխառության ծախսումների կապիտալացումը սկսելու համար պարտադիր է որ ձեռնարկվեն այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար;
- Գ) Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է, երբ ակտիվի վրա կատարվող աշխատանքները ընդհատվում են տվյալ ժամանակաշրջանի համար սովորական համարվող բնակլիմայական պատճառներով;
- Դ) Որակավորվող ակտիվը պետք է լինի նյութական:

11. ՀՀՄՍ 32 Ֆինանսական գործիքներ, ներկայացումը ստանդարտի համաձայն ֆինանսական գործիքը սահմանվում է որպես.

- Ա) Պայմանագիր, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ կամ բաժնային գործիք, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք;
- Բ) Պայմանագիր, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք;
- Գ) Պայմանագիր, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ կամ բաժնային գործիք, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն;
- Դ) Պայմանագիր, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն:

12. ՀՀՄՍ 33 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ ստանդարտի համաձայն մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հավասար է.

- Ա) Սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթի կամ վնասի և ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին քանակի հարաբերությանը;
- Բ) Սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթի կամ վնասի և հաշվետու ամսաթվի դրությամբ շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի քանակի հարաբերությանը;
- Գ) Բաժնետերերին վերագրվող շահույթի կամ վնասի և ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին քանակի հարաբերությանը;
- Դ) Բաժնետերերին վերագրվող շահույթի կամ վնասի և հաշվետու ամսաթվի դրությամբ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակի հարաբերությանը:

13. Ըստ ՀՀՄՍ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ ստանդարտի ճշգրտումների հաշվառման նշված կանոններից որն է ճիշտ.

Ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները միշտ պետք է կիրառվեն հետընթաց;

Բ) Հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունները միշտ պետք է կիրառվեն հետընթաց;

Գ) Նախորդ ժամանակաշրջանների էական սխալները ուղղվում են հետընթաց, իսկ ոչ էական սխալները չեն ուղղվում;

Դ) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ընտրելիս պետք է առաջնորդվել նմանատիպ հարցերը կարգավորող այլ ՖՀՄՍ-երի պահանջներով և ֆինանսական հաշվառման տարրերի սահմանումներով:

14. Նշված իրավիճակներից որն է առաջացնում հետաձգված հարկային պարտավորություն ըստ ՀՀՄՍ 12 Շահութահարկեր ստանդարտի.

Ա) Պաշարի արժեզրկումը չի նվազեցվում շահութահարկի հաշվարկում;

Բ) Դեբիտորական պարտքի արժեզրկումը նվազեցվում է շահութահարկի հաշվարկում;

Գ) Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը, որը ճանաչվել է որպես այլ համապարփակ եկամուտ, չի ազդում հարկային բազայի վրա;

Դ) Սարքավորման տեղակայման ծախսումները շահութահարկի առումով ապահովված չեն հիմնավորող փաստաթղթով:

15. Ըստ ՀՀՄՍ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ստանդարտի համաձայն նշված կանոններից որն է ճիշտ.

Ա) Պահուստները պետք է չափվեն գնահատված ծախսումների ներկա արժեքով, եթե զեղչման ազդեցությունն էական է;

Բ) Պահուստի գնահատականը պետք է կատարվի անհրաժեշտ արտահոսքի ամենահավանական ելքով;

Գ) Պայմանական ակտիվներն ու պայմանական պարտավորությունները կարող են հաշվանցվել, եթե կազմակերպությունն ընտրել է այդպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն;

Դ) Եթե նախատեսվում է, որ որևէ այլ կողմ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցման իրավունքը ճանաչվում է առանձին ակտիվ կամ պահուստի գծով պարտավորության նվազեցում՝ կախված կազմակերպություն կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից:

16. Տարեսկզբին հետաձգված հարկային պարտավորությունը կազմում է 10,000, իսկ ընթացիկ տարվա զուտ շահույթը՝ մինչև հետաձգված հարկերի ճշտումը կազմում է 24,000: Տարեվերջին զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը 830,000 է իսկ հարկային բազան՝ 770,000: Ըստ ՀՀՄՍ 12 *Շահութահարկեր* ստանդարտի տարեվերջի դրությամբ ստորև ներկայացվածներից որն է ճիշտ: Ենթադրվում է հետաձգված հարկեր առաջանալու այլ պայմանները բավարարված են և շահութահարկի դրույքը 20% է:

Ա) Զուտ շահույթ 22,000; Հետաձգված հարկային պարտավորություն 12,000;

Բ) Զուտ շահույթ 26,000; Հետաձգված հարկային պարտավորություն 12,000;

Գ) Զուտ շահույթ 22,000; Հետաձգված հարկային պարտավորություն 8,000;

Դ) Զուտ շահույթ 26,000; Հետաձգված հարկային պարտավորություն 8,000;

17. Համաձայն ՀՀՄՍ 38 *Ոչ նյութական ակտիվներ* ստանդարտի որ պայմանը պարտադիր չէ մշակման ծախսումների կապիտալացման համար.

Ա) Ոչ նյութական ակտիվի մշակմանը վերագրվող ծախսումներն արժանահավատորեն չափելու կարողությունը;

Բ) Ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու մտադրությունը;

Գ) Ոչ նյութական ակտիվը օգտագործման կամ վաճառքի համար մատչելի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը;

Դ) Նշված բոլոր պայմաններն էլ պարտադիր են:

18. Համաձայն ՖՀՄՍ 15 *Հասույթ գնորդների հետ պայմանագրերից* ստանդարտի նշված պայմաններից որը բավարար չէ, որպեսզի հասույթը ճանաչվի կատարման պարտականության կատարման ընթացքում.

Ա) Գնորդը միաժամանակ ստանում և սպառում է կատարված կատարման պարտականության արդյունքում ստացված օգուտները;

Բ) Կազմակերպությունն ունի բավարար ռեսուրսներ և մտադրություն՝ կատարման պարտականությունը ավարտին հասցնելու համար;

Գ) Կատարման պարտականության կատարման արդյունքում ստեղծվում է ակտիվ, որը ստեղծմանը զուգընթաց հսկվում է գնորդի կողմից;

Դ) Կազմակերպությունն իրավաբանորեն ամրագրված իրավունք ունի մինչև այդ ամսաթիվը կատարված կատարման պարտականության դիմաց վճարումներ ստանալու:

19. Դրամաստեղծ միավորը բաղկացած է 4 հիմնական միջոցից և գուղվիլից, որոնց տվյալներն են.

Ակտիվ	Հաշվեկշռային արժեք	Հնարավոր առանձին վաճառքի գին
I ՀՄ	50,000	0
II ՀՄ	60,000	65,000
III ՀՄ	30,000	23,000
Գուղվիլ	20,000	0

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը 126,000 միավոր է: Համաձայն ՀՀՄՍ36 Ակտիվների արժեզրկում ստանդարտի ինչպես պետք բաշխվի արժեզրկումը դրամաստեղծ միավորի ակտիվների միջև.

Ա)

Ակտիվ	Հաշվեկշռային արժեք	Արժեզրկում	Ճշտված հաշվեկշռային արժեք
I ՀՄ	50,000	5,000	45,000
II ՀՄ	60,000	6,000	54,000
III ՀՄ	30,000	3,000	27,000
Գուդվիլ	20,000	20,000	0
Ընդամենը	160,000	34,000	126,000

Բ)

Ակտիվ	Հաշվեկշռային արժեք	Արժեզրկում	Ճշտված հաշվեկշռային արժեք
I ՀՄ	50,000	8,750	41,250
II ՀՄ	60,000	0	60,000
III ՀՄ	30,000	5,250	24,750
Գուդվիլ	20,000	20,000	0
Ընդամենը	160,000	34,000	126,000

Գ)

Ակտիվ	Հաշվեկշռային արժեք	Արժեզրկում	Ճշտված հաշվեկշռային արժեք
I ՀՄ	50,000	10,625	39,375
II ՀՄ	60,000	12,750	47,250
III ՀՄ	30,000	6,375	23,625
Գուդվիլ	20,000	4,250	15,750
Ընդամենը	160,000	34,000	126,000

Դ)

Ակտիվ	Հաշվեկշռային արժեք	Արժեզրկում	Ճշտված հաշվեկշռային արժեք
I ՀՄ	50,000	7,000	43,000
II ՀՄ	60,000	0	60,000
III ՀՄ	30,000	7,000	23,000
Գուդվիլ	20,000	20,000	0
Ընդամենը	160,000	34,000	126,000

20. Համաձայն ՀՀՄՍ 36 Ակտիվների արժեզրկում ստանդարտի արժեզրկման հակադարձումից.

Ա) Ակտիվի հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախկինում ճանաչված չլինի արժեզրկումից կորուստը;

Բ) Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է հավասարվի այդ պահի դրությամբ դրա փոխհատուցվող գումարին;

Գ) Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է լինի ոչ պակաս քան այն հաշվեկշռային արժեքը, որն ուներ ակտիվը արժեզրկման պահին;

Դ) Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է հավասարվի այդ պահի դրությամբ դրա իրական արժեքին՝ հանած օտարման ծախսումներ:

21. Համաձայն ՖՀՄՍ 15 Հասույթ գնորդների հետ պայմանագրերից ստանդարտի նշված դրույթներից որն է ճիշտ.

Ա) Եթե կազմակերպությունը ակտիվը վաճառում է և ունի այն 2 տարի հետո հետգնելու պարտականություն (ֆորվարդ), ապա վաճառքի պահին հասույթը ճանաչվում է վաճառքի գնի չափով;

Բ) Եթե կազմակերպությունը ակտիվը վաճառում է և ունի այն 2 տարի հետո հետգնելու պարտականություն (ֆորվարդ) և հետգնման գինը փոքր է վաճառքի գնից, ապա վաճառքի պահին հասույթը ճանաչվում է միայն հետգնման գնի չափով;

Գ) Եթե կազմակերպությունը ակտիվը վաճառում է և ունի այն 2 տարի հետո հետգնելու պարտականություն (ֆորվարդ) և հետգնման գինը փոքր է վաճառքի գնից, ապա վաճառքի պահին հասույթը ճանաչվում է միայն հետգնման գնի գեղչված գումարի չափով;

Դ) Եթե կազմակերպությունը ակտիվը վաճառում է և ունի այն 2 տարի հետո հետգնելու պարտականություն (ֆորվարդ), ապա վաճառքի պահին հասույթ չի ճանաչվում:

22. ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտի համաձայն ամորտիզացված արժեքով հաշվառման ենթակա ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են.

Ա) Իրական արժեքով;

Բ) Իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսումները;

Գ) Իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով ծախսումները;

Դ) Ամորտիզացված արժեքով:

23. ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի համաձայն վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքը հաշվառելիս.

Ա) Եթե վաճառքի հատուցումը մեծ է գույքի իրական արժեքից, ապա տարբերությունը դիտարկվում է որպես վարձակալության կանխավճար;

Բ) Եթե վաճառքի հատուցումը մեծ է գույքի իրական արժեքից, ապա տարբերությունը դիտարկվում է որպես վաճառքի ինքնարժեքի ճշտում;

Գ) Եթե վաճառքի հատուցումը մեծ է գույքի իրական արժեքից, ապա տարբերությունը դիտարկվում է որպես վաճառող-վարձակալին գնորդ-վարձատուի կողմից տրամադրված լրացուցիչ ֆինանսավորում;

Դ) Եթե վաճառքի հատուցումը մեծ է գույքի իրական արժեքից, ապա տարբերությունը դիտարկվում է որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի ճշտում:

24. Ընթացիկ տարվա հունվարի 1-ին սեփական կապիտալը բաղկացած է 500,000 հատ սովորական բաժնետոմսերից և 20,000 հատ 5% եկամտաբերությամբ 10,000 դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսերից: Ապրիլի 1-ին 4:1 հարաբերությամբ թողարկվել է բոնուսային 125,000 հատ սովորական բաժնետոմս՝ էմիսիոն եկամտի հաշվին:

Օգոստոսի 1-ին թողարկվել և շուկայի միջոցով տեղաբաշխվել է 48,000 հատ սովորական բաժնետոմս: Տարվա զուտ շահույթը կազմում է 85 մլն դրամ: Ըստ ՀՀՄՍ 33 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ՝ ստանդարտի բազային մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը կազմում է.

Ա) 122.20 դրամ;

Բ) 131.78 դրամ;

Գ) 111.44 դրամ;

Դ) 116.28 դրամ:

25. Ստորև նշվածներից որը չի համարվում հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու սկզբունք ըստ ՀՀՄՍ 1 *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը* ստանդարտի

Ա) Հաշվեգրում;

Բ) Հաշվանցում;

Գ) Հավասարակշռում;

Դ) Համադրելիություն:

ԲԱԺԻՆ Բ. Խնդիրներ.

2 խնդիրն էլ պարտադիր են

Խնդիր 1 – Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Մայր կազմակերպությունը 2020թ.-ի ապրիլի 1-ին ձեռք է բերել Դուստր ընկերության բաժնետոմսերի 70%-ը: Ձեռքբերման դիմաց հատուցումը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- 15000 հատ Մայրի սովորական բաժնետոմս (ձեռքբերման պահին տրամադրված 1 բաժնետոմսի իրական արժեքը կազմում է 4,000 դրամ);
- Հիմնական միջոց, որի հաշվեկշռային արժեքը մայր կազմակերպության ֆինանսական վիճակում կազմում է 8 մլն դրամ, իսկ իրական արժեքը՝ 10 մլն դրամ;
- 6 մլն դրամ կանխիկ;
- 3 տարի հետո վճարման ենթակա պայմանական հատուցում՝ կախված Դուստրի շրջանառությունից: Ձեռքբերման պահին կատարված կանխատեսումներով պայմանական հատուցման ենթակա գումարի չափը գնահատվում է 14 մլն դրամ, և այս գնահատականը մնում է անփոփոխ նաև 2020 դեկտեմբերի 31-ին: Ձեռքման համար կիրառելի է 10% դրույքը:

Ստորև ներկայացված են Մայր և Դուստր կազմակերպությունների առանձին ֆինանսական հաշվետվությունները 31/12/2020թ.-ի դրությամբ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 31/12/2020թ. ավարտվող տարվա համար

	Մայր	Դուստր
	՝000 դրամ	՝000 դրամ
Հասույթ	318,000	151,000
Վաճառքի ինքնարժեք	(211,300)	(97,200)
Համախառն շահույթ	106,700	53,800
Վարչական և այլ գործառնական ծախսեր	(38,420)	(18,940)
ՀՄ օտարումից օգուտ	2,000	3,480
Ֆինանսական ծախսեր	(3,650)	(1,220)
Շահաբաժիններից եկամուտ	21,000	-
Այլ ծախսեր	(3,230)	(720)
Տարվա շահույթ	84,400	36,400
Ֆինանսական ներդրումների վերաչափումից այլ համապարփակ եկամուտ	4,850	-
Ընդամենը համապարփակ արդյունք	89,250	36,400

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն առ 31/12/2020թ.

	Մայր	Դուստր
	՝000 դրամ	՝000 դրամ
Հիմնական միջոցներ	110,950	92,500
Ներդրում Դուստր ընկերությունում	89,000	-
Այլ ֆինանսական ներդրումներ	17,520	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	217,470	92,500
Պաշարներ	29,450	36,850
Դեբիտորական պարտքեր	66,440	28,900
Դրամական միջոցներ	1,740	17,390
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	97,630	83,140
Ընդամենը ակտիվներ	315,100	175,640
Բաժնետիրական կապիտալ (յուրաքանչյուրը 1000 դրամ)	90,000	40,000
Էմիսիոն եկամուտ	32,650	18,400
Ֆինանսական ակտիվների վերաչափումից պահուստ	2,850	-
Կուտակված շահույթ	61,422	38,700
Ընդամենը սեփական կապիտալ	186,922	97,100
Վարկեր և փոխառություններ	41,820	9,500
Երկարաժամկետ պահուստներ	10,518	-
Կրեդիտորական պարտքեր	72,840	66,600
Կարճաժամկետ պահուստներ	3,000	2,440
Ընդամենը պարտավորություններ	128,178	78,540
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	315,100	175,640

Առկա են նաև հետևյալ տվյալները.

- i) Մայր կազմակերպությունը իր առանձին հաշվետվություններում Դուստր ընկերությունում ներդրումը հաշվառում է իրական արժեքով՝ ճանաչելով իրական արժեքի տատանումները որպես այլ համապարփակ եկամուտ կամ ծախս:
- ii) Դուստր ընկերության 1 բաժնետոմսի իրական արժեքը 01/04/2020թ.-ին կազմում է 3000 դրամ, իսկ 31/12/2020թ.-ին՝ 3,500 դրամ: Համախմբված հաշվետվությունում չվերահսկվող բաժնեմասը հաշվառվում է բաժնեմասի իրական արժեքով:
- iii) Ձեռքբերման պահին դուստր ընկերության ակտիվների պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համարժեք են իրական արժեքներին, բացառությամբ սարքավորման, որի իրական արժեքը գերազանցում է հաշվեկշռային արժեքը 12 մլն դրամով, և որի մնացորդային օգտակար ծառայությունը 5 տարի է: Մաշվածությունն արտացոլվում է վարչական ծախսերում:
- iv) Տարեվերջին գուղվիլը արժեզրկվել է 15%-ով: Գուղվիլի արժեզրկումը ներկայացվում է այլ ծախսերում:

- v) Մայր կազմակերպության երկարաժամկետ պահուստը վերաբերում է Դուստր ընկերության ձեռքբերման պայմանական հատուցմանը, որի գծով սկզբնական ձևակերպումը ճիշտ կատարվել է, սակայն հաշվետու ամսաթվին ոչ մի ձևակերպում չի կատարվել:
- vi) Տարվա 2-րդ կիսամյակում Դուստրը 30 մլն դրամ ինքնարժեքով պաշար վաճառել է Մայրին 33 մլն դրամով: Մայրը մինչև հաշվետու ամսաթիվը սպառել է դրանց միայն 40%-ը, բայց վճարումը կատարել է ամբողջությամբ:
- vii) Տարվա 2-րդ կիսամյակում Մայր կազմակերպությունը 56 մլն դրամ ինքնարժեքով պաշար վաճառել է Դուստր ընկերությանը 62 մլն դրամով: Դուստր ընկերության համար սա համարվում է հիմնական միջոց, որը շահագործման համար մատչելի է դարձել 2021թ.-ի հունվարին: Հաշվետու ամսաթվին Դուստրը վճարել է արժեքի միայն կեսը
- viii) Դուստր ընկերությունում կարճաժամկետ պահուստը առաջացել է մայր կազմակերպությանը մատուցման ենթակա ծառայության անբարենպաստ պայմանագրի գծով: Իսկ մայր կազմակերպությունում ճանաչված կարճաժամկետ պահուստը առաջացել է վաճառված ապրանքների տրամադրված երաշխիքից, որի 15%-ը վերաբերում է նախորդ կետում նշված Դուստր ընկերությանը կատարված վաճառքին:
- ix) Դուստր ընկերությունը 30 մլն դրամ շահաբաժին հայտարարել է դեկտեմբերին, որը հաշվետու ամսաթվի դրությամբ դեռ վճարված չէ:
- x) Դուստր ընկերության եկամուտներն ու ծախսերը տարվա ընթացքում առաջացել են հավասարաչափ: Հետաձգված հարկերը անտեսվում են:

Պահանջվում է կազմել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2020թ.-ի համար:

(25 միավոր)

Խնդիր -2 Անուղղակի մեթոդով դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Ստորև ներկայացված են «Թնդանոթ» ԲԲԸ-ի 2020թ.-ի ֆինանսական հաշվետվություններից քաղվածք.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն առ 31/12/2020թ.

	Հազար դրամ	
	31/12/2020	31/12/2019
Հիմնական միջոցներ	874,200	659,840
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	11,400	10,650
	885,600	670,490
Պաշարներ	16,450	20,400
Դեբիտորական պարտքեր	14,440	17,650
Դրամական միջոցներ	21,980	65,360
	52,870	103,410
Ընդամենը ակտիվներ	938,470	773,900
Սովորական բաժնետոմսեր	380,000	345,000
Բաժնետոմսերի հավելագին	23,000	20,000
ՀՄ Վերագնահատման պահուստ	113,200	70,480
Կուտակված շահույթ	95,500	55,450
	611,700	490,930
Երկարաժամկետ վարկեր	175,650	195,000
Հետաձգված հարկային պարտավորություններ	30,460	16,480
	206,110	211,480
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	8,840	7,450
Երաշխիքային պահուստներ	21,850	13,600
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	1,500	16,840
Կրեդիտորական պարտքեր	88,470	33,600
	120,660	71,490
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	938,470	773,900

Շահույթ/վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 31/12/2020թ.-ին ավարտվող ֆինանսական տարվա համար

	Հազար դրամ
	31/12/2020
Իրացումից հասույթ	566,700
Իրացման ինքնարժեք	(421,500)
Համախառն եկամուտ	145,200
Վարչական և այլ ծախսեր	(22,660)
Տոկոսային ծախսեր	(870)
ՀՄ օտարումից օգուտ	690
ՀՄ արժեզրկում	(1,060)
Փոխարժեքային օգուտ	90
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող	1,340

ներդրումներից եկամուտներ	
Շահույթ մինչև շահութահարկ	122,730
Շահութահարկ	(21,560)
Տարվա շահույթ	101,170
ՀՄ վերագնահատումից աճ՝ համախառն	98,700
ՀՄ վերագնահատումից աճի շահութահարկ	(26,420)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	72,280
Ընդամենը համապարփակ արդյունք	173,450

Հայտնի են նաև հետևյալ տվյալները

- (i) Հիմնական միջոցները օտարվել են 4,480 հազար դրամով: Մինչ հաշվետու ամսաթիվը գնորդների կողմից վճարվել է միայն կեսը:
- (ii) Հիմնական միջոցների գծով հաշվարկվել է 124,750 հազար դրամ մաշվածություն:
- (iii) Կրեդիտորական պարտքերի սկզբնական մնացորդը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերման գծով 8,450 հազար դրամ պարտքը, իսկ վերջնական մնացորդը՝ 18,600 հազար դրամ: Բացի այդ, վերջնական մնացորդը ներառում է 4,000 հազար դրամ պարտավորություն շահաբաժիններ գծով:
- (iv) Փոխարժեքային տատանումներից օգուտը ամբողջությամբ վերագրվում է վարկերին: Հաշվետու տարվա ընթացքում նոր վարկեր չեն ստացվել:
- (v) Տարվա ընթացքում հաշվեգրված տոկոսներն ամբողջությամբ վճարվել են՝ ներառյալ հիմնական միջոցների ինքնարժեքում կապիտալացված 350 հազար դրամը: Տարվա ընթացքում վճարվել են նաև տարեսկզբի մնացորդներում առկա հաշվեգրված և չվճարված 180 հազար տոկոսները:
- (vi) Համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ տոկոսների և շահաբաժինների վճարումները ներառվում են ֆինանսավորման գործունեության մեջ:
- (vii) Ներդրումների գծով եկամուտը առաջացել է ասոցիացված կազմակերպությունում ներդրումը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառելիս: Հաշվետու տարվա ընթացքում ներդրման ավելացում կամ պակասեցում չի կատարվել:
- (viii) Ներդրումների գծով շահաբաժիններն ամբողջությամբ ստացվել են և ենթակա են ներկայացման ներդրումային հոսքերում:
- (ix) Հաշվետու տարվա ընթացքում կանոնադրական կապիտալը համալրվել է 18 մլն դրամ իրական արժեքով հիմնական միջոցով և 12 մլն դրամ կանխիկ դրամական միջոցներով: Տարվա ընթացքում տեղի է ունեցել նաև կանոնադրական կապիտալի աճ կուտակված շահույթի հաշվին:
- (x) Հաշվետու ժամանակաշրջանում հիմնական միջոցների վերագնահատման պահուստից որոշ չափով կատարվել է վերադասակարգում կուտակված շահույթին:

Պահանջվում է կազմել «Թնդանոթ» ԲԲԸ-ի 2020թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով:

(25 միավոր)